Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1129-22.07.2025-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2002 թվականի հունիսի 4-ի Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ պարբերության «*հասարակայնության ծանուցում*» հասկացության «, որը տպագրվում է առնվազն 1000 տպաքանակ ունեցող տպագիր միջոցներում» բառերը հանել.

2) 99-րդ պարբերության **«հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգ»** հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում շրջանառու համակարգ՝ ջրախնայող համակարգ, որը կապահովի ձկնաբուծարանի ելքային ջրերի առնվազն 40 տոկոսի մաքրումից հետո կրկին օգտագործումը նույն ձկնաբուծարանի նույն ավազաններում՝ ապահովելով ձկնաբուծարանի մուտքային ջրերի առնվազն 40 տոկոս ջրախնայողություն.»:

Հոդված 2. Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) սահմանում է ջրային ռեսուրսներում աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները և ջրօգտագործման թույլտվությամբ՝ էկոլոգիական թողքերը, ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի որակական և քանակական չափաքանակները.»,

2) 11-րդ կետից հանել «ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետից հանել «ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև այլ» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով.

«5) հակահեղեղային միջոցառումների իրականացումը»:

Հոդված 5. Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «, հաստատված է Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կնիքով» բառերը հանել:

Հոդված 6. Օրենսգրքի 30.1-ին հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. 6-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ և 8-րդ կետերով.

«7) առկա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական բացասական եզրակացությունը, եթե օրենքով նախատեսված է, որ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության.

8) ջրային ռեսուրսի ծանրաբեռնվածությունը գերազանցում է միջին ծանրաբեռնվածության աստիճանը՝ համաձայն մեթոդաբանության:».

2) 2-րդ մասի 1-ին կետի ա և բ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված՝ ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանի որոշման մեթոդաբանությունը սահմանում է կառավարությունը:»:

Հոդված 7. Օրենսգրքի 33-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման դեպքում ջրօգտագործման թույլտվությունը չի համարվում երկարաձգված: Ջրօգտագործման թույլտվությունը երկարաձգվում է սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ և սույն հոդվածի 6-րդ մասերով

սահմանված կարգով, իսկ ջրօգտագործման թույլտվությունը չերկարազգվելու դեպքում՝ ջրօգտագործման թույլտվության մերժման մասին լիազոր մարմինը պատշաճ ծանուցում է լիցենզիա տրամադրող լիազոր մարմնին մերժման մասին հրամանն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:».

2) 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«Եթե ջրօգտագործման թույլտվության հայտի ներկայացման ժամանակ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին չի ներկայացվել օրենքով նախատեսված դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը, ապա տրված ջրօգտագործման թույլտվությունը կասեցվում է սույն օրենսգրքի 30.2-րդ հոդվածի համաձայն, որն ուժը կորցրած է ճանաչվում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին ներկայացնելու դեպքում: Կասեցման ժամկետը չի հաշվարկվում ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի մեջ:»:

Հոդված 8. Օրենսգրքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 3-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով.

«4) եթե ջրօգտագործման թույլտվություն ունեցողը ջրօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին չի ներկայացնում օրենքով նախատեսված դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 37-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը «Ջրօգտագործման և» բառերից հետո լրացնել «Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում» բառերով,

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Ջրօգտագործման և էկոլոգիական թողքի հաշվառման համար տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման, շահագործման կարգը և էկոլոգիական թողքի հաշվառման դեպքերը սահմանում է կառավարությունը:»:

Հոդված 10. Օրենսգրքի 37.1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 17-րդ մասով.

«17. Սույն հոդվածի 13-րդ մասում սահմանված համայնքներում «Հայաստանի Հանրապետության Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված Արարատյան դաշտի վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսների բաշխումը ջրօգտագործողների միջև՝ ըստ սույն մասում թվարկված ջրօգտագործման գերակա ուղղությունների, սահմանվում են հետևյալ առավելագույն չափաքանակներով.

1) խմելու-կենցաղային – 12 տոկոս
2) գյուղատնտեսական – 30,9 տոկոս
3) էներգետիկ – 0 տոկոս
4) արդյունաբերական – 2 տոկոս
5) ձկնաբուծական – 55 տոկոս
6) ռեկրեացիոն և բնապահպանական – 0.1 տոկոս։»:

Հոդված 11. Օրենսգրքի 37.3-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) խթանել հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում շրջանառու համակարգով գործունեության իրականացումը։».

2) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի 10-րդ հոդվածն ուժի մեջ մտնելուց հետո նույն հոդվածով Օրենսգրքի 37.1-ին հոդվածում լրացվող 17-րդ մասով սահմանված ուղղություններով ջրօգտագործողների ջրօգտագործման թույլտվությունները վերանայվում են ջրօգտագործման թույլտվությունների ժամկետների երկարաձգման դիմումները

քննարկելու շրջանակներում՝ ջրօգտագործման ծավալները համամասնորեն կրճատելու և սույն օրենքի 10-րդ հոդվածով Օրենսգրքի 37.1-ին հոդվածով լրացվող 17-րդ մասով սահմանված չափաքանակներին համապատասխանեցնելու նպատակով:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2002 թվականի հունիսի 4-ի Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ պարբերության ~~կետի~~ «*հասարակայնության ծանուցում*» հասկացության «, որը տպագրվում է առնվազն 1000 տպաքանակ ունեցող տպագիր միջոցներում» բառերը հանել.

2) ~~89-րդ կետի~~ 99-րդ պարբերության **«հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգ»** հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում շրջանառու համակարգ՝ ջրախնայող համակարգ, որը կապահովի ձկնաբուծարանի ելքային ջրերի առնվազն 40 տոկոսի մաքրումից հետո կրկին օգտագործումը նույն ձկնաբուծարանի նույն ավազաններում՝ ապահովելով ձկնաբուծարանի մուտքային ջրերի առնվազն 40 տոկոս ջրախնայողություն.»:

Հոդված 2. Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝

2) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) սահմանում է ջրային ռեսուրսներում աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները և ջրօգտագործման թույլտվությամբ՝ էկոլոգիական թողքերը, ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի որակական և քանակական չափաքանակները.»,

2) 11-րդ կետից հանել «ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետից հանել «ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև այլ» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով.

«5) հակահեղեղային միջոցառումների իրականացումը»:

Հոդված 5. Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «, հաստատված է Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կնիքով» բառերը հանել:

Հոդված 6. Օրենսգրքի 30.1-ին հոդվածի՝

2) 1-ին մասի՝

ա. 6-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ և 8-րդ կետերով.

«7) առկա ~~չէ~~ է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական ~~դրական~~ բացասական եզրակացությունը, եթե օրենքով նախատեսված է, որ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության.

8) ջրային ռեսուրսի ծանրաբեռնվածությունը գերազանցում է միջին ծանրաբեռնվածության աստիճանը՝ համաձայն մեթոդաբանության:».

2) 2-րդ մասի 1-ին կետի ա և բ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված՝ ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանի որոշման մեթոդաբանությունը սահմանում է ~~Կկ~~առավարությունը:»:

Հոդված 7. Օրենսգրքի 33-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման դեպքում ջրօգտագործման թույլտվությունը չի համարվում երկարաձգված: Ջրօգտագործման թույլտվությունը երկարաձգվում է սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ և սույն հոդվածի 6-րդ մասերով սահմանված կարգով, իսկ ջրօգտագործման թույլտվությունը չերկարազգվելու

դեպքում՝ ~~այդ մասին ծանուցվում է լիցենզիա տրամադրող լիազոր մարմնին~~ ջրօգտագործման թույլտվության մերժման մասին լիազոր մարմինը պատշաճ ծանուցում է լիցենզիա տրամադրող լիազոր մարմնին մերժման մասին հրամանն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում :»~~։~~

2) 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«Եթե ջրօգտագործման թույլտվության հայտի ներկայացման ժամանակ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին չի ներկայացվել օրենքով նախատեսված դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը, ապա տրված ջրօգտագործման թույլտվությունը կասեցվում է սույն օրենսգրքի 30.2-րդ հոդվածի համաձայն, որն ուժը կորցրած է ճանաչվում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին ներկայացնելու դեպքում: Կասեցման ժամկետը չի հաշվարկվում ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի մեջ:»:

Հոդված 8. Օրենսգրքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 3-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով.

«4) եթե ջրօգտագործման թույլտվություն ունեցողը ջրօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին չի ներկայացնում օրենքով նախատեսված դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը:»:

~~**Հոդված 8.**~~ **Հոդված 9.** Օրենսգրքի 37-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը «Ջրօգտագործման և» բառերից հետո լրացնել «Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում» բառերով,

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Ջրօգտագործման և էկոլոգիական թողքի հաշվառման համար տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքերի տեղադրման, կնքման, շահագործման կարգը և էկոլոգիական թողքի հաշվառման դեպքերը սահմանում է ~~Հայաստանի Հանրապետության~~ կառավարությունը:»:

~~**Հոդված 9.**~~ **Հոդված 10.** Օրենսգրքի 37.1-ին հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 17-րդ մասով.

«17. Սույն հոդվածի 13-րդ մասում սահմանված համայնքներում «Հայաստանի Հանրապետության Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված Արարատյան դաշտի վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսների բաշխումը ջրօգտագործողների միջև՝ ըստ սույն մասում թվարկված ջրօգտագործման գերակա ուղղությունների, սահմանվում են հետևյալ առավելագույն չափաքանակներով.

7) խմելու-կենցաղային – 12 տոկոս

8) գյուղատնտեսական – 30,9 տոկոս

9) էներգետիկ – 0 տոկոս

10) արդյունաբերական – 2 տոկոս

11) ձկնաբուծական – 55 տոկոս

12) ռեկրեացիոն և բնապահպանական – 0.1 տոկոս:»:

~~**Հոդված 10.**~~ **Հոդված 11.** Օրենսգրքի 37.3-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) խթանել հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում շրջանառու համակարգով գործունեության իրականացումը:».

2) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

~~**Հոդված 11.** Օրենսգրքի 121-րդ հոդվածի 6-րդ մասի 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:~~

Հոդված 12.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի ~~9~~10-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

3. Սույն օրենք~~ի~~ի 10-րդ հոդվածն ուժի մեջ մտնելուց հետո ~~սույն օրենքի 9-րդ~~ նույն հոդվածով Օրենսգրքի 37.1-ին հոդվածում լրացվող 17-րդ մասով սահմանված

ուղղություններով ջրօգտագործողների ջրօգտագործման թույլտվությունները վերանայվում են ջրօգտագործման թույլտվությունների ժամկետների երկարաձգման դիմումները քննարկելու շրջանակներում՝ ջրօգտագործման ծավալները համամասնորեն կրճատելու և սույն օրենքի ~~9~~10-րդ հոդվածով Օրենսգրքի 37.1-ին հոդվածով լրացվող 17-րդ մասով սահմանված չափաքանակներին համապատասխանեցնելու նպատակով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԻ (Կ-1129.1-22.07.2025-ՏՏԳԾ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն	6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետի՝ Օրենսգրքի 30.1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ա և բ ենթակետերն ուժը կորցրած ճանաչելու փոփոխությամբ պայմանավորված առաջարկվում է 2002 թվականի հունիսի 4-ի Հայաստանի	Ընդունվել է Հաշվի առնելով ներկայացված առաջարկությունը՝ Նախագծի՝ **<u>1.</u>** - 6-րդ հոդվածի 1-ին կետի բ ենթակետով	Ընդունվել է

			Հանրապետության ջրային օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Եթե նախատեսվող գործունեության համար օրենքով սահմանված է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն, նախագծային աշխատանքներ կատարելու համար հայտ ներկայացնողին 5 օրվա ընթացքում տրամադրվում է ժամանակավոր թույլտվություն (տեղեկանք)՝ տվյալ տեղանքում օգտագործման ենթակա ջրի քանակի վերաբերյալ»:» Հիմնավորում Կարծում ենք, որ շատ տրամաբանական է, որպեսզի տնտեսվարողը մինչև ՇՄԱԳ	լրացվող նոր 7-րդ կետում «չէ» բառը փոխարինվել է «է» բառով, իսկ «դրական» բառը՝ «բացասական» բառով, **<u>2.</u>** - 7-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետով. «2) **5-րդ մասից հետո լրացնել** հետևյալ բովանդակությամբ **նոր մաս.** **«**Եթե ջրօգտագործման թույլտվության հայտի ներկայացման ժամանակ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին չի	

			փորձաքննություն անցնելը հնարավորություն ունենա նախագծային աշխատանքներ կատարելու համար դիմել և ստանալ ջրօգտագործման ժամանակավոր թույլտվություն (տեղեկանք)՝ տվյալ տեղանքում օգտագործման ենթակա ջրի քանակի վերաբերյալ: Եվ միայն ՇՄԱԳ փորձաքննության ավարտից հետո այդ թույլտվույթունը օրինական ուժ ստանա: Սա կբացառի այն դեպքերը, երբ տնտեսվարողը անցնի ՇՄԱԳ փորձաքննությունը՝ ծախսելով ռեսուրսներ և ժամանակ, որից հետո պարզվի, որ այդ աշխատանքը անիմաստ էր, քանի որ օգտագործվող ջրի քանակը բավարար չէ պրոյեկտի իրականացման համար:	ներկայացվել օրենքով նախատեսված դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը, ապա տրված ջրօգտագործման թույլտվությունը կասեցվում է սույն օրենսգրքի 30.2-րդ հոդվածի համաձայն, որն ուժը կորցրած է ճանաչվում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին ներկայացնելու դեպքում: Կասեցման ժամկետը չի	

			Սա նաև ավելի մեծ ճկունություն կհաղորդի ներդրողներին և կնպաստի գործընթացների արագությանը, ինչը չափազանց կարևոր է ներդրումային միջավայրի բարելավման և տնտեսական աճի տեսանկյունից:	հաշվարկվում ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի մեջ:»»: Լրացման արդյունքում՝ Նախագծի 7-րդ հոդվածը ներկայացվել է 2 կետով և համարակալվել է: **<u>3.</u>** Լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ հոդվածով. «**Հոդված 8.** Օրենսգրքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի՝ 1) 3-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,	

				2) **լրացնել** հետևյալ բովանդակությամբ **նոր 4-րդ կետով.** **«4)** եթե ջրօգտագործման թույլտվություն ունեցողը ջրօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին չի ներկայացնում օրենքով նախատեսված դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը։»**:**	

				Ըստ այդմ օրենքի նախագծի հոդվածների համարակալումը վերանայվել է: Միաժամանակ, հայտնում եմ, որ վերոնշյալ կարգավորումների համաձայն գործելու են հետևյալ ընթացակարգերը՝ 1. Ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության լիազոր մարմին ներկայացված հայտը դրական գնահատվելու դեպքում, հայտատուին տրամադրվելու է	

				ջրօգտագործման թույլտվություն և նույն պահին այն կասեցվելու է՝ մինչև օրենքով նախատեսված դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական եզրակացությունը լիազոր մարմին ներկայացնելը: 2. Ի նպաստ տնտեսվարողի՝ կասեցման ժամկետը չի հաշվարկվելու ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի մեջ: 3. Ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո մեկ տարվա	

				ընթացքում օրենքով նախատեսված դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական եզրակացությունը լիազոր մարմին չներկայացնելու դեպքում՝ջրօգտագործման թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում:	
1.	Կառավարություն	1-ին հոդված	1. 1-ին հոդվածի 1-ին կետում «կետի» բառը փոխարինել «պարբերության» բառով, 2. 2-րդ կետում առաջարկում ենք վրիպակը շտկել՝ «89-րդ կետի» բառերի փոխարեն լրացնել «99-րդ պարբերության բառերը»՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը,	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

2.	Կառավարություն	6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի՝ նախատեսվող Օրենսգրքի 30.1-ին հոդվածում նոր լրացվող 3-րդ մասում «Կառավարություն» բառը գրել փոքրատառով հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը և 15-րդ հոդվածի 2-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	7-րդ հոդված	Առաջարկում ենք հստակեցնել, թե ինչ ժամկետում և եղանակով է իրականացվում ջրօգտագործման թույլտվությունը չերկարաձգվելու դեպքում լիցենզիա տրամադրող լիազոր մարմնին ծանուցելը: Հաշվի առնելով վերոգրյալը 7-րդ հոդվածում «այդ մասին ծանուցվում է լիցենզիա տրամադրող լիազոր մարմնին» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել	Ընդունվել է	Ընդունվել է

			«ջրօգտագործման թույլտվության մերժման մասին լիազոր մարմինը պատշաճ ծանուցում է լիցենզիա տրամադրող լիազոր մարմնին մերժման մասին հրամանն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը:		
4.	Կառավարություն	8-րդ (լրամշակված 9-րդ) հոդված	8-րդ (լրամշակված 9-րդ) հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 37-րդ հոդվածի 5-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը փոխարինել «կառավարույթունը» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը և 15-րդ հոդվածի 2-րդ մասը:		
5.	Կառավարություն	11-րդ հոդված	Քանի որ, գործող Օրենսգրքի 121-րդ հոդվածում ամրագրված են Օրենսգրքի	Ընդունվել է	Ընդունվել է

			անցումային դրույթները և նախագծի 11-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունը վերաբերում է իրավազորություն չունեցող դրույթի (ժամկետները սպառված են), ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը առաջարկում ենք նախագծի 11-րդ հոդվածը հանել:		
6.	Կառավարություն	12-րդ հոդված	Առաջարկում ենք վերանայել և հստակեցնել օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպումը՝ կանխելու համար հնարավոր հակասությունները նախագծի 9-րդ (լրամշակված 10-րդ) հոդվածի և ամբողջական օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետների միջև: Նման հստակեցումը անհրաժեշտ է, որպեսզի	Ընդունվել է	Ընդունվել է

			օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը, ապահովվի ջրօգտագործման թույլտվությունների ժամկետների երկարաձգման գործընթացի պատշաճ իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության «Ջրային օրենսգրքի» 37.1 հոդվածով առաջարկվող 17-րդ մասում սահմանվող չափաքանակներին համապատասխան: Հաշվի առնելով վերոգրյալը օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մասում «օրենքն» բառը փոխարինվել է «օրենքի 10-րդ հոդվածն» բառերով, իսկ «սույն օրենքի 9-րդ» բառերը՝ «նույն» բառով:		
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ»					

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	**Կառավարություն**	վերնագիր	Օրենքի նախագծի վերնագրից հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ ապահովելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը առ այն՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը»:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	**Կառավարություն**	1-ին հոդված	Հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենք)» ձևակերպումը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենքի նախագծում «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի	Ընդունվել է	Ընդունվել է

			մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում:		